# 59

ՅԵ 5, Էլմ. 613, Սաղմ. 95

1. Ամեն երկիրներ, Տերոջմով ցնծացեք
Դողով և ուրախությունով,
Տեր Եհովային ընծաներ մատուցեք
Յոգվով և ճշմարտությունով:

2. Քանզի գերազանց բարերար է մեր Տերն,
Որ մեզ ստեղծած է, և մենք՝
Անոր խոտավետ արոտին գառնուկներն,
Պիտի Անոր ձայնը լսենք:

3. Անոր սուրբ դռները եկեք գոհությամբ,
Անոր սրահները մտեք:
Անոր փառք տվեք հոն և օրհներգությամբ
Անոր անունեն գոհացեք:

4. Զի Ինք մեր Աստվածն է ի հավիտենից,
Կեցած են ու պիտի կենան
Անոր խորհուրդներն ու գործերն գթալից
Ազգե մինչև ազգ՝ հավիտյան: